ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

<<Երևանի Լեոյի անվան հ.65 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

Կատարող՝ Արև Մկրտչյան

Ղեկավար՝ Արմինե Սաֆարյան

ԱՐԱՐԱՏ 2023

Բովանդակություն

Ներածություն……3

Գլուխ1 Արժեհամակարգի ձևավորումը ուսումնական գործընթացում……5

Գլուխ2 Սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորումը որպես արդի մանկավարժության կարևոր պահանջ……7

Գլուխ3 Արժեհամակարգի դասավանդման մեթոդիկան

հասարակագիտություն դասաժամերին……..……9

Գլուխ 4. <<Կոռուպցիա>> թեմայի ուսուցման մեթոդները որպես արժեհամակարգի ձևավորման կարևոր միջոց……..……11

4.1 Խմբային աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները, ուսումնական գործընթացի տեսակները……13

Եզրակացություն……17

Օգտագործված գրականության ցանկ……..……18

Ներածություն

Թեմայի արդիականությունը .

Կրթության մասին խոսելիս մենք հաճախ օգտագործում ենք արժեքներ հասկացությունը։ Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ. այն պետք է վերապրել,զգալ և գիտակցել։Առանց արժեքների կյանքը դատարկ է։ Հեշտ,առանց կորուստների և հաղթահարումների ապրելն երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով,որ չի բերում արժեքների ձևավորման։Երբ փլուզում են արժեքները, խախտվում է համակեցությունը և տարածվում անբարոյականությունը,հանցագործությունները դառնում են համատարած,կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը։Հենց այս պատճառով է,որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը։ Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել։ 《Արժեքն》 այն է, ինչ գնահատելու, կողնորոշվելու, հասկանալու հնարավորություն է տալիս։ Կողնորոշիչներ ունենալն,անկասկած, մարդու հիմնարար պահանջմունքների է։

ՀՀ պետական չափորոշում որպես կրթության բովանդակային բաղադրիչ ներառված է նաև արժեհամակարգը հասկացությունը։Արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական,մշակութային և էթիկական արժեքների համախումբն է,որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման համար։ Դպրոցի, մանկավարժի գերնպատակն է կերտել բարոյական,ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ։Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է երեխայի մեջ սերմանել մեր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքները,փոխանցել մեր նախնիներից ժառանգած մեր ինքնատիպ արժեքները, նաև կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար կարևոր են համաշխարհային փորձի ուսումնասիրումն ու համեմատությունը։Ուստի 21-րդ դարի գերխնդիրներից է կերտել սերունդ ,որ կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, ցույց կտա նաև տարբեր մշակութային բարոյահոգեբանական արժանիքները։Մանկավարժը պետք է նպաստի մտածող

անհատի ձևավորմանը,օգնի յուրացնել ժողովրդավարական արժեքները,կսովորեցնի հարգելու,օգնելու,լսելու,քննադատելուինքնաարժեորման մշակույթը[1}։

Ինչպիսի՞ հասարակությունում են ապրելու մեր երեխաները վաղը։Այս հարցի պատասխանը տալիս է այն կրթությունն,որ մենք տալիս ենք այսօր։Կրթությունն առանցքային դեր ունի ապագայի ձևավորման գործում և արտացոլում է աշխարհի այն տեսակը,որն ուզում ենք ստանալ հետագա սերունդների համար։Ժողովրդավարական գործընթացներին ակտիվորեն մասնակցելու կարողության ձեռքբերումն ու պահպանումը սկսվում է վաղ մանկության շրջանում և շարունակվում է ողջ կյանքի ընթացքում։

Հանգամանքները փոխվում են և անհրաժեշտ է ,որ մարդիկ զարգացնեն առկա կարողունակությունները ու ձեռք բերեն նորերը՝արձագանքելու իրենց ապրած միջավայրում տեղի ունեցող փոփոխություններին։Ուսումնական հասարակությունները կարևոր դեր ունեն այս հարատև գործընթացում։Երեխաների մեծ մասը հանրային տիրույթի հետ առաջին շփումն ու առնչությունն են ունենում դպրոցում,և դպրոցը պետք է լինի այն վայրը,որտեղից սկսվում է ժողովրդավարական կրթությունը։Այն լիարժեք կրթության տեսլականն է,որը ներառում է 4 գլխավոր նպատակ՝

- սովորողին պատրաստել աշխատաշուկային
- պատրաստել կյանքին՝ որպես ժողովրդավարական հասարակության ակտիվ քաղաքացի
- ապահովել անձնական զարգացում
- ձևավորել և պահպանել որպես առաջանցիկ գիտելիքի բազա։

Գլուխ 1 . Արժեհամակարգի ձևավորումը ուսումնական գործընթացում

Մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է,այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը. դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝ նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը: Արժեքային կրթության նոր՝ արևմտյան մանկավարժության մեջ մշակված մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է:Ըստ դրա՝աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ, այսինքն՝ նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ:

Ժողովրդավարությունը վերացական է այնքան ժամանակ, քանի դեռ չկա ժողովրդավարական մշակույթի կրող, իր ինքնությունն ու դիրքորոշումները ճանաչող մարդ, իրավունքի և օրենքի գերակայության կարևորությունն ընդունող, մարդկային արժանապատվությունն ու մարդու իրավունքները հարգող, դրանցով առաջնորդվող, սրտացավ քաղաքացին, նոր փոփոխությունների պատրաստ, մշակութային երկխոսությանը չդիմադրող և քաղաքակիրթ անհատ:

Հանրակրթական պետական չափորոշչի ընդհանուր դրույթներում սահմանվում է չաձորոշչի նպատակն ու գործառույթը{2}: Մասնավորապես նշվում է.

Հանրակրթության պետական չափորոշիչը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական

պահանջները ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ,կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ), ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող

պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը:

Այս դրույթում առանցքային հասկացություններից է <<կարողունակություն>> բառը, որն էլ կառուցում է չափորոշչի բովանդակության մի շարք մասեր, ինչպիսին, օրինակ, սովորողի արժեհամակարգի ձևավորումն է: Այստեղ կարևոր է նաև ինքնակրթությամբ զբաղվելը:

Ինքնակրթությունը կրթության բարձրագույն և լավագույն ձևն է: Այսօր ինքնակրթության դար և անսահման մեծ են միջոցները. համացանց, հեռուստատեսություն, ռադիո, հոգևոր կայքեր, ֆիլմեր, գրքեր:

Այսօր երեխաներն անհամբեր են, կեսից հանձնվում են, ձանձրանում: Իրենց թվում է, թե ամեն բան այս կյանքում պետք է կառուցված լինի «այստեղ և հիմա» սկզբունքի հիման վրա: Այսինքն՝ մի գործ արեցիր, իսկույն պետք է փոխհատուցվես: Աշակերտի մեջ պետք է սերմանել ոչ նյութական արժեքներ ձեռք բերելու ունակություն, բացատրելով ,որ մարդկանց ուզում են փոքրացնել, խռովեցնել, բաժանել, որպեսզի կարողանան տիրել: Թեև միշտ լսում ենք, որ մարդը կարևոր է, սակայն,երբ որ երբ մարդուն ասում են՝ դու կարևոր ես, նշանակում է, այդ մարդուց ուզում են դրամ կամ մեկ այլ բան շորթել: Մարդուն ամեն կերպ ուզում են նյութապաշտ և խեղճ դարձնել:

Այստեղ օգնության է գալիս արժեհամակարգ հասկացությունը, ուսուցումը, ճիշտ մատուցումը:

Գլուխ2 Սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորումը որպես արդի մանկավարժության կարևոր պահանջ

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների,արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը պետք է որոշակի դաստիարակչական խնդիրներ լուծի՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝հասարակագիտության դասաժամերին խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը, դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության,

ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:Հատկապես դեռահասներին առանձնահատուկ զգացմունքայնությունը,ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ:Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:Պատմությամբ ապացուցված է՝ այն պահին, երբ հայ ժողովուրդը հավատարիմ է եղել ազգային արժեհամակարգին, հավաքական ոգին ավելի մեծ հաջողություններ է արձանագրել, դիմագրվել է տարբեր փորձությունների: Ազգի, պետության գոյության հիմնասյուներն են՝ եկեղեցի, ընտանիք, մշակույթ, լեզու ,արժեհամակարգ, սակայն տեսնում ենք՝ այսօր խորքային փոփոխություններ կատարելու միտում կա՝ հենց այդ ոլորտներում: Եթե սրանք չպահպանվեն, ազգի գոյաբանական, ազգի, պետության գոյության խնդիր է առաջանում:

Գլուխ3 Արժեհամակարգի դասավանդման մեթոդական հասարակագիտության դասաժամերին

Սեփական երկրի նկատմամբ արժեհամակարգի ձևավորումը սկսվում է դեռևս ընտանիքից: Իսկ արդեն աշակերտական նստարանին այն արժևորվում և մեծագույն պատասխանատվություն է արմատավորվում:Մեր սերունդը դասագրքերով չէ, որ պիտի իմանա, թե ինչ է սեփական երկրի շահը պահելն ու պաշտպանելը, քանզի նա իր աչքով է տեսել ու ցավոք տեսնում է դրա հետևանքները:Շատ կարևոր է իրական արժեբանական արժեհամակարգի ճիշտ ընկալման հիմնահարցերի լուսաբանումը, որով էլ պայմանավորված է շրջապատում իրական արժեքների նկատմամբ ճիշտ ու համարժեք վերաբերմունքի դրսևորումը: Վերջին ժամանակներում շատ կարևոր է վեր հանել արժեքի հատկանիշները, բացահայտել, արժեքի էությունը, արժեբանական ընկալումները, առանձնահատկությունները, հիմնական բնութագրիչները, հասկացություններն ու գիտական հիմնավորումները:Հասարակության մեջ տեսականորեն ամրագրված արժեքները վերաիմաստավորվում են մարդկանց առօրյա կյանքում: Այդ ամբողջ գործընթացի իրականացման մոդելը մեր պատկերացմամբ հետևյալն է.

1.Պատմականորեն ձևավորված և սերնդեսերունդ փոխանցված արժեքների ամրագրումն ամենուր և հատկապես հանրակրթության ոլորտում

2.Արժեքների ճիշտ ընկալումը

3.Արժեքների իրացման համար երաշխիքների ապահովումը

Այս համատեքստում տեղին ենք համարում կատարել մի շարք կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող շեշտադրում. ձևավորել և ամրագրել անցյալի արժեքների արժեբանական ժառանգությունը, արդի պահանջներին համապատասխան կիրառելու գործնական ունակությունների ձեռքբերումը, որը համարվում է հանրակրթության ոլորտի հիմնական գերխնդիրը:Այսպիսով ազգային արժեհամակարգով ձևավորված սերունդը կունենա արժանապատիվ ապագա:Հավատարիմ մնանք մեր ազգային արժեհամակարգին, ազգային մտածելակերպին և վստահորեն կերտենք փայլուն ապագա, ամրագրելով մեր հաղթանակները:Այսօր շատ կարևոր է կրտսեր դպրոցականների արժեքային

կողմնորոշումների ձևավորման էության բացահայտումն ու զարգացումը:Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման էության բացահայտումը մանկավարժական ներգործության տեսանկյունից ենթադրում է այդ գործընթացի դիտարկումը նրա բովանդակային բաղադրատարրերի ամբողջության մեջ: Ուսուցման պայմաններում արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացն երկկողմանի բնույթ ունի. այդ գործընթացի արդյունավետության վրա ազդում են և՛ արժեքների յուրացման նկատմամբ սովորողների մղումն ու ակտիվ գործունեությունը, և՛ այդ գործընթացը կազմակերպող ուսուցչի գործունեությունը:Սովորողների մեջ արժեքային կողմնորոշոմների ձևավորման իրականացման գործընթացի բովանդակային կողմը ներառում է նրանց հոգեկանում գերակա արժեքները, ինչպես նաև մանկավարժական ներգործության միջոցների համալիրը, որն ակտիվացնում է դպրոցականի՝ արժեքների յուրացմանը միտված գործունեությունը:

Գլուխ 4. <<Կոռուպցիա>> թեմայի ուսուցման մեթոդը որպես արժեքային համակարգի ձևավորման կարևոր միջոց

XXI դարի մուտքը հայաստանյան դպրոցներում համընկավ քննադատական մտածողության զարգացման ներդրմամբ:

Այն հիմնականում մշակված է հասարակագիտական առարկաների համար, սակայն դասավանդման եռափուլ համակարգը (ԽԻԿ) հմտորեն կիրառելու դեպքում, այն զարգացնում է քննադատական մտածողության (ՔՄ) կարողություններ ինչպես բնագիտական առարկաների, այնպես էլ մաթեմատիկայի դասավանդման ժամանակ: Միաժամանակ ՔՄ մեթոդների կիրառությունը մեծացնում է ուսուցիչների պատասխանատվությունը՝ ավելի ճիշտ գնահատելու աշակերտների մտածողության որակը և քննողաբար վերաբերվելու իրենց իսկ դասավանդման մեթոդաբանությանը:

Ստորև ներկայացվում են ՔՄ մեթոդների կիրառմամբ.

Դասի նպատակը `

Սահմանել կոռուպցիա երևույթը ,

ճանաչել կոռուպցիայի դրսևորումները և գծապատկերել ։

Դասի ընթացքը `I փուլ /խթանում/

Ուսուցիչը <<մտավոր գրոհ>> մեթոդով աշխատում է վեր հանել դասի կարևոր կետերը, թվել կոռուպցիայի պատճառները, դրսևորման ձևերը, որոնք առկա են մեր շրջապատում ։ Այնուհետև աշակերտների ուշադրությունը սևեռում է հետևյալ հարցերի վրա .

1.Ի՞նչ գիտեք կոռուպցիայի մասին:

2.Որո՞նք են կոռուպցիայի հետևանքները:

3.Ի՞նչ օրինակներ գիտեք կոռուպցիայի մասին ։

Աշակերտների արտահայտած բոլոր մտքերը խմբավորվում են: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը մեծ հնարավորություն է տալիս անհատական և խմբային աշխատանքները կազմակերպելիս, կարճ ժամանակամիջոցում ծանոթանալու աշխատանքային և տեխնոլոգիական վերջին նվաճումներին, առաջարկում է նոր ձևեր և ուղիներ՝ առարկայի դասավանդման գործընթացում, կիրառելի է դարձնում առավել մատչելի և հասանելի ուսուցողական և ճանաչողական նշանակության նյութեր, տեսաերիզներ, ֆիլմեր: Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների շնորհիվ սովորողները դառնում են տեղեկատվության ազատ սպառողներ՝ անմիջական կախվածություն չունենալով դասագրքային նյութերից, որը հնարավոր է իրականացնել դասարանական և արտադասարանական աշխատանքներ ։

4.1 Խմբային աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները, ուսումական գործընթացի տեսակները:

Խմբային գործունեության անհրաժեշտ պայմաններն են՝ ազատ հաղորդակցումն ու շփումը, դիմացինին լսելու, հասկանալու, մտածված պատասխան տալու կարողությունը, հան-դուրժողականությունը, համագործակցությունը, իր և խմբի անդամների ուսումնառու-թյան, աշխատանքի և հաջո-ղու-թյան համար պատասխանատվությունը: Գործունեության ձևերն են՝ համատեղ հետազոտական և ստեղծագործական աշխատանքը, միասին զրույցներ, բանա-վեճեր, քննարկումներ, շնորհանդեսներ, մրցույթներ նախա-պատրաստելը և իրականացնելը: Խմբային աշխատանքների գործունեությունը հիմնականում իրականացվում է ուսում-նասիրվող հիմնական թեմաների շուրջ կառուցված՝ պարզից բարդ ուղղորդող վար-ժություն-ների, գծագրերի, պատկերների, համեմատությունների կա-տարմամբ: Ելնելով սովո-րողների տարիքային և հոգե-բանական առանձնահատկություններից, փոխվում է առար-կայի ուսուցման նպատակները, խնդիրները: Համագործակցություն խմբերում: Աշակերտները պետք է հասկանան, որ իրենց հաջողությունը կախված է խմբի բոլոր անդամների ներդրումից: Նման խմբերին բնորոշ է թիմային աշխատանքի ոգին, ընդհանուր նպատակին հասնելու համար առավելագույնն անելու ցանկությունը, փոխկախվածությունն ու փոխկապվածությունը, սոցիալական փոխազդեցության հմտությունները, խմբի աշխատանքի ընթացքը և արդյունքը մշտապես գնահատելու և վերանայելու կարողությունը: Ուսուցչի խնդիրն է՝ առաջադրանք-ները կառուցել այնպես, որ սովորողները համագործակցելու կարիք ունենան: Այս մեթոդը նախատեսում է դասարանի աշակերտներին խմբերի բաժանել, ովքեր հանձնարարված առաջադրանքները կատարում են խմբով: Օրինակ՝ մեկ խումբը նախագծում է, մյուսը՝ մոդելավորում, երրորդը՝ կազմակերպում տեխնոլոգիական մշակման աշխատանքները:Խմբային (համագործակցային) մեթոդն ակտիվացնում է աշակերտներին, բարձրացնում նրանց հետաքրքրասիրությունը կատարվող աշխատանքի նկատմամբ: Խմբային գործունեությունը ենթադրում է խմբային աշխատանքի համագործակցություն: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:

Դիտարկենք համագործակցային ուսուցման տարրերը.

Դրական փոխկախվածություն: Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են համատեղ հասնելու ընդհանուր նպատակին: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:Դեմառդեմ, խթանող փոխազդեցություն: Խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու :Հասարակագիտության դասերին դասի մասնակցային սկիզբ ապահովող մեկ այլ մեթոդներից մեկը մտագրոհի թվային տարբերակը (նորույթ է մտագրոհի թվային տարբերակը menti.com կայքի միջոցով): Աշակերտները նախապես իրենց հեռախոսներով հավաքում են կոդը և սկսում են պատասխանել ուսուցչի հարցին(նման է՝ <<Ո՞վ է ուզում դառնալ միլիոնատեր>> հեռուստատեսային խաղին):

Օրինակ ՝ ուսուցչի հարցը կարող է հնչել հետևյալ կերպ. Ո՞ր արժեքների համար պետք է պայքարենք ամեն օր:Էկրանին երևում է մտքերի տարափ : Ուսուցիչը կարդում է և միասին քննարկում են անցկացնում համագործակցային մեթոդներով: Բանավեճային քննարկումները հատկապես արդյունավետ են 9_12 դասարաններում:Աշակերտները բաժանվում են 2 խմբերի՝ կողմ և դեմ,որն ընտրվում է վիճակահանությամբ:Կողմ թիմը թեմայի վերաբերյալ կառուցողական ելույթ է նախապատրաստում, դեմ թիմը հակառակ փաստարկներ է բերում:Բանավեճային քննարկման ժամանակ շատ կարևոր էթիկայի նորմերի պահպանումը, միմյանց կարծիքը լսելը, չընդհատելը:Կողմ թիմը թեմայի վերաբերյալ կառուցողական ելույթ է նախապատրաստում, դեմ թիմը հակառակ փաստարկներ է բերում:Բանավեճը կարող է տևել ամբողջ դասաժամ:Կարելի է շրջանակները ընդլայնել և ,օրինակ, բամավեճ կազմակերպել մեկ այլ դասարանի աշակերտների հետ՝ ընտրելով նախապես թեման, լրացուցիչ տեղեկություններով:Հետաքրքիր օրինակ է երբ 9_րդ դասարանի աշակերտները բանավիճում են <<Կոռուպցիա shift+delete>> ծրագրի շրջանակներում, թեման՝<<Կոռուպցիան հնարավոր չէ արմատախիլ անել կրթական

հաստատություններում>> կամ <<Համայնքապատկան կառույցներում հովանավորչությունը կրում է շարունակական բնույթ>>։Բանավիճելու ընթացքում վեր են հանվում կարևոր գաղափարներ, աշակերտը սովորում է , որ կոռուպցիան փչացնում է, խեղում է հասարակությունը։Վերհանելով խնդիրը ՝ փորձում է լուծում առաջարկել։Նրա մոտ ձևավորվում է նոր վերաբերմունք՝ արդար և առանց կեղծիքի , կաշառքի, հովանավորչ ության հասարակություն ունենալու միտումները։Խոսող, քննարկվող, բանավիճող, նոր գաղափարներ վերհանող աշակերտը դառնում է իր պետության մասին մտահոգվող չօտարված անհատ և ձևավորում է ազնիվ , ճշմարիտ արժեհամակարգ։

Մենք՝ ուսուցիչներս պետք է կարողանանք դասապրոցեսի ընթացքում օրինակներով և իրավիճակին նկարագրություններով ցույց տալ բարու և չարի, արդարի և անարդարի տարբերությունները, հասնենք նրան, որ աշակերտը սեփական դիրքորոշում ունենա, վերլուծի փաստերը, համեմատի, գնահատի, արժևորի և արդյունքում ձևավորի քննադատական մտածողություն։Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն՝ ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը։Սոցիալական հմտություններ: Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդրում ունենալը։Ուսումնական գործընթացում, ելնելով՝ թեմայի բովանդակությունից, դասի նպատակից, դասարանի, սովորողների, քննարկվող հիմնախնդրի առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից, կարող են ընտրվել ուսումնական գործունեության հետևյալ տեսակները՝

- ուսումնական նյութի բացատրում,

- ինքնավերլուծություն, զրույցներ ու հարցազրույցներ,

- աշխատանք տպագիր և էլեկտրոնային սկզբնաղբյուրների հետ՝ գիտական բազային գործիքների օգտագործմամբ (մեջբերումներ, հղումներ, ամփոփումներ, եզրակացություններ, առաջարկություններ)։

- զանգվածային լրատվամիջոցներից ստացված տեղեկատվության վերլուծություն, աղբյուրների գնահատում և համադրում,

- հիմնախնդիրների հետազոտում,

- հանդիպումներ,

- մրցույթների անցկացում,

- հաշվետվությունների և էսսեների պատրաստում,

- բանավեճերի կազմակերպում,

- ՏՀՏ կիրառմամբ թվային գործիքների օգտագործում,

- դերային խաղեր,

- թղթապանակների պատրաստում, մեկնաբանում,

- անհատական ու խմբային, ինքնուրույն և համագործակցային, աշխատանքների կատարում,

- անդրադարձ ուսումնական գործունեությանը։

Եզրակացություն

Մենք ՝ ուսուցիչներս, ունենք բացառիկ առաքելություն սերունդներին թողնել մեր երազած հայրենիքը, որի համար պետք է լինի մեր ամենօրյա աշխատանքն ու նվիրումը։

Տասնամյակներ շարունակ մեր արժեհամակարգում իշխել է կեղծիքը, սուտը, կոռուպցիան։

Պետք է ստեղծենք այնպիսի համակարգ, որտեղ աշակերտի համար գիտելիք ստանալը դառնա նոր արժեք ստեղծելու նախապայման և նա վստահ լինի, որ գիտելիքը ուժ է, և այդ ուժը ստեղծելու է բարիք իր և իր հայրենիքի համար։

ԵՎ այդ ամենը պետք է ստեղծենք ուսուցիչներս վաղվանից՝ չսպասել որ որևէ մեկը մեզ համար լավ երկիր է կառուցելու։Պետք է հասնել նրան, որ յուրաքանչյուր աշակերտ գիտակցի , որ իր հայրենիքը , իր պատասխանատվությունը չի ավարտվում իր տան նախամուտքով, և որ իր բակը , իր փողոցը ունի իր խնամքի ու հոգատարության կարիքը։Աշակերտի արժեհամսկարգում պետք է հեղափոխություն կատարվի , որտեղ գերիշխող ը պետք է լինի ազատությունը, ճշմարտությունը, արդարությունը։Հասարակագիտություն առարկան թույլ է տալիս բազմաթիվ մեթոդներ կիրառել դասի ընթացքում , բերել օրինակներ առօրյա կյանքից , գտնել լուծումներ խնդիրներին , բացահայտել նորը։

Օգտագործված գրականության ցանկ

Arlis.am Հանրակրթության առարկայական չափորոշչային վերջնարդյունքները և

օրինակելի ծրագրերը

12_րդ դասարանի հասարակագիտության դասագիրք __ Երևան 2016

Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար, (Եվրոպայի խորհուրդ, դեկտեմբեր 2020, (հայերենհրատարակություն) (Եռահատոր շարք) էջ 43

Օրինակներ սեփական մանկավարժական գործունեությունից՝ ելնելով <<Կոռուպցիա>> թեմայից

Ս. Գևորգյան _<<Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան 2002, էջ 65

https://Mediamax.am

https://qahana.am.post

https://menti.com